ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է մինչև 2023 թ-ի հունիսի 3-րդ տասնօրյակը մշակել առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրմամբ պայմանավորված հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների մշակում, հարակից փաստաթղթերի մշակման ընթացքում բժշկական ապահովագրության գործունեության խորհրդատվություն, այդ թվում

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում հիմնական ծառայությունների փաթեթի նորմերի, ձևակերպումների, սահմանումների տրամադրում, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկների տրամադրում, դրանց իրավական ուղեկցմանը աջակցում:
2. Ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթի կազմման մեթոդաբանության, ծառայությունների ընդգրկման և դուրս բերման, բացառությունների սահմանման խորհրդատվություն:
3. Շահառուների հետ կնքվող պայմանագրերի ձևերի մշակման հետ կապված խորհրդատվություն:
4. Բժշկական կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերի մշակման հետ կապված խորհրդատվություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում հիմնական ծառայությունների փաթեթի նորմերի, ձևակերպումների, սահմանումների տրամադրում, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկների տրամադրում՝ ըստ պայմանագրի ժամկետի,
2. Ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթի, դրա բացառությունների ցանկի, հիմնական փաթեթում ծառայությունների ներառման և դուրս բերման մեթոդաբանության մշակում մինչև հունիսի 30-ը:
3. Շահառուների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերի ներկայացում մինչև հուլիսի 31-ը:
4. Բժշկական կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերի տրամադրում մինչև հուլիսի 31-ը:

1-ին կետի ներառմամբ հաշվետվությունը և օրենքում այլ օրենքներում ձևակերպումների փաթեթը պետք է ներկայացվի ըստ պայմանագրի ժամկետի:

2-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և ենթաօրենսդրական փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հունիսի 15-ը:

3-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը :

4-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն ըստ անհրաժեշտության, ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի նախագահի կողմից ներկայացված անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 31.07.2023 թվականը:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն առողջապահության, տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում:
- Ավելի քան 5 տարվա բժշկական ապահովագրության կառավարման, բժշկական կամ այլ տիպի ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների վերահսկման փորձառություն,
- Ավելի քան 5 տարվա փորձ բժշկական ապահովագրական փաթեթների կազմման խորհրդատվության,
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ պետական կառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու առնվազն 1 տարվա փորձ,
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքի, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: